



## **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 10-Ա**

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱԿԱՆ  
ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԹՈՒՐ  
ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՆՈՒՇԱՎԱՆ  
ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐԻՆ ԴՐՈՇՄԱԿՆԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, Հանրապետության նախագահի 2023 թվականի մարտի 17-ի թիվ ՆՀ-98-Ա և մարտի 20-ի թիվ ՆՀ-99-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

### **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավոր Արթուր Նահապետյանին և Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Անուշավան Մուշեղյանին տրամադրել իրեն անվամբ կնիքներ:

2. Վերաքննիչ քրեական դատարանի դատավորին տրամադրել Վերաքննիչ քրեական դատարանի անվանմամբ «26 հերթական համարով դրոշմակնիք:

#### **Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2023թ. մարտի 21  
ք. Երևան